

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 44/7

3 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Մետրոպոլ» ՍՊԸ 06.10.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 08.09.2015 թ-ի թիվ 5101841 ակտի դեմ:

#### **«Մետրոպոլ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

«Մետրոպոլ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) խնդրում է հանձնաժողովի քննարկմանը դնել ՀՀ ՖՆ Կենտրոն ՀՏ-ի կողմից 08.09.2015թ.-ին կազմած թիվ 5101841 ակտով և 15.04.2015թ.-ին կազմած թիվ 6107933 ակտով առանց բավարար հիմքերի խախտում արձանագրելու հարցը: Ընկերությունը երկու դեպքերում էլ պահպանել է ՀԴՄ-ի շահագործման կանոնները ՀՀ օրենքով սահմանված պահանջների շրջանակներում: Մասնավորապես՝

1. 08.09.2015թ.-ին կազմած թիվ 5101841 ակտով չի խախտվել ՀՀ կառավարության 01.08.2013թ. N-846-Ն ՀԴՄ-ի կիրառման կարգի վերաբերյալ 2-րդ հավելվածի 17-րդ, 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որովհետև վերջինիս պահանջները հնարավոր չէ ապահովել՝ համաձայն «Մետրոպոլ» ՍՊԸ-ի կողմից 16.09.2015թ.-ին հարկային մարմիններին ուղղված գրությամբ ներկայացված փաստարկների: ՀՀ կառավարության 01.08.2013թ.-ի N-846-Ն ՀԴՄ-ի կիրառման կարգի վերաբերյալ 2-րդ հավելվածի 17-րդ, 23-րդ կետի 2-րդ ենթակետից բխող պահանջները դեռևս կարգավորված չեն, իրականացվում են համապատասխան ծրագրային աշխատանքներ, որոնք նախատեսված է ավարտել սույն թվականի հոկտեմբեր ամսվա վերջին՝ ինչպես հայտնում է «Մետրոպոլ» ՍՊԸ-ի գրությանն ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարությունը (29.09.15թ.-ի թիվ 06/3-4/2808-15):

2. 15.04.2015թ.-ին կազմած թիվ 6107933 ակտով չի խախտվել ՀՀ կառավարության 01.08.2013թ.-ի N-846-Ն ՀԴՄ-ի կիրառման կարգի վերաբերյալ 1-ին հավելվածի 13-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները, որովհետև 03.04.2015թ.-ին հաճախորդին տրամադրած թիվ 00002649 կտրոնի վրա տպագրված ծառայության անվանումը լիովին համապատասխանում է օրենքի պահանջին: ՀՀ կառավարության 01.08.2013թ.-ի N-846-Ն ՀԴՄ-ի կիրառման կարգի վերաբերյալ 1-ին հավելվածի 13-րդ կետի 9-րդ ենթակետով պահանջվում է տպագրել ապրանքի (ծառայության) անվանումը, որը և եղել է թիվ 00002649 կտրոնի վրա: Այդ կարգը, ինչպես նաև որևէ այլ օրենսդրական ակտ չի պահանջում տպագրել ապրանքի (ծառայության) անվանման նկարագրությունը, ապրանքի (ծառայության) ինդենտիֆիկացիան, և չի սահմանում խախտում ապրանքի (ծառայության) անվանման նկարագրությունը կամ ինդենտիֆիկացիան թերի կամ ոչ լրիվ լինելու դեպքում:

#### **ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հանձնաժողովի կողմից քննության է ենթակա միայն ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 08.09.2015 թ-ի թիվ 5101841 ակտի դեմ բերված գանգատը: Ինչ վերաբերվում է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 15.04.2015 թ-ի թիվ 6107933 ակտի դեմ բերված գանգատին, ապա այն ենթակա չէ քննության՝ ընկերության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված գանգատարկման երկամյա ժամկետը բաց թողնվելու հետևանքով: Այդ մասին ընկերությանը տեղեկացվել է համապատասխան գրությամբ:

Նշվեց նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարի 31.07.2015 թ-ի թիվ 5101841 հանձնարարագրի համաձայն «Մետրոպոլ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 08.09.2015 թ-ի թիվ 5101841 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ավագ հարկային տեսուչ Կարեն Հայրապետյանի կողմից 26.08.2015 թ-ին ժամը 11:40-ին ք.Երևան, Մաշտոցի 2/2 հասցեում գտնվող հյուրանոցում կատարվել է սենյակի ամրագրում 3 օրվա համար, որի արժեքը կազմել է 150.000 դրամ և որի դիմաց վճարվել է կանխավճար, կանխիկ դրամով 50.000 դրամի չափով: Գանձապահ՝ Տիգրանուհի Մուրադյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 13:53-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 700 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությանը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 50000 դրամը, ժամը 13:54-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 13:54-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 50.700 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման հավելված N 2-ով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ և 23-րդ կետերի պահանջները, համաձայն նույն կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի ՀԴՄ-ի կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց՝ դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք 300.000 դրամի չափով:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ Ակտի 1-ին կետով արձանագրված խախտման վերաբերյալ ընկերության կողմից առցանց գրությամբ (այսուհետ՝ գրություն) հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարություն: Գրությունում ընկերությունը մասնավորապես նշել է, որ ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի N 846-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ կիրառման կարգի 1-ին հավելվածի 13-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները հնարավոր չէ ապահովել, որովհետև կանխավճարը դա ոչ վաճառվող ապրանքի անվանում է, ոչ էլ մատուցվող ծառայության անվանում: Բացի այդ, կանխավճարը չունի չափման միավոր և գին, այսինքն՝ նշված կարգի 1-ին հավելվածի 13-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները, որի համաձայն ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը, հնարավոր չէ ապահովել:

Ըստ գրության, կանխիկ դրամով կանխավճար ստանալու ժամանակ ՀԴՄ կտրոն հնարավոր չէ տրամադրել, քանի որ նման ֆունկցիա դեռևս ՀԴՄ-ում առկա չէ, հետևապես ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի N 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 17-րդ կետի և 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները հնարավոր չէ ապահովել:

Ընկերության հարցմանը պատասխանվել է ՀՀ Ֆինանսների նախարարության 29.09.2015 թ-ի թիվ 06/3-4/28089-15 գրությամբ, որում մասնավորապես նշվել է, որ բարձրացված հարցի կարգավորման նպատակով իրականացվում են համապատասխան ծրագրային աշխատանքներ, որոնք նախատեսվում է ավարտել մինչև սույն թվականի հոկտեմբեր ամսվա վերջը:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է մանրաձախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման պարտադիր պահանջ, սակայն կանխավճարների դեպքում նշված պահանջը նոր սերնդի ՀԴՄ-ներ շահագործող տնտեսավարողների կողմից, ըստ էության, հնարավոր չէ կատարել՝ համապատասխան ծրագրային խնդիրների առկայության պատճառով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Ակտի 1-ին կետով արձանագրված խախտումն ընկերության կողմից կատարված լինելու՝ խախտման փաստի առկայության համար, անհրաժեշտ է, որպեսզի ընկերության կողմից խախտումը կատարված լինի մեղավորությամբ: Այսինքն, անհրաժեշտ է պարզել, թե կատարված խախտման մեջ առկա է արդյոք ընկերության մեղքը, թե ոչ:

Տվյալ դեպքում ընկերության կողմից թույլ տրված խախտումը պայմանավորված է եղել ծրագրային խնդիրների առկայությամբ, այսինքն՝ կարելի է փաստել, որ տեղի ունեցածում ընկերության մեղքը, ըստ էության, բացակայում է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ստեղծված իրավիճակում ընկերությունը չի կարող պատասխանատվության ենթարկվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այնպիսի պահանջի խախտման համար, որի իրականացումն այդ պահին պրակտիկորեն (տեխնիկապես) հնարավոր չի եղել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 08.09.2015 թ-ի թիվ 5101841 ակտը:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**